

Հայտարարություն

Լրացուցիչ փուլ (թափուր)

Հիմնական փուլի մրցույթի արդյունքները հրապարակվելու են **ա/թ հուլիսի 18-ին**: Հրապարակելուց հետո ընդունելության քննությունից դրական միավոր ստացած, սակայն հիմնական մրցույթից դուրս մնացած դիմորդները թափուր տեղերի առկայության դեպքում կարող են մասնակցել **լրացուցիչ փուլի (թափուրի) մրցույթին** (ընդունելության կարգի 70-րդ կետ): **Լրացուցիչ փուլի (թափուրի) մրցույթին** մասնակցելու համար մեկ կամ ավել բուհերի մինչև 6 (վեց) մասնագիտությունների նշումով նոր դիմում-հայտը դիմորդները **dimord.am** կայքի միջոցով ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ **ա/թ հուլիսի 19-ից մինչև հուլիսի 26-ը ներառյալ, հուլիսի 26-ին՝ մինչև ժամը 18:00**: Հիմնական փուլով ընդունված դիմորդները չեն կարող մասնակցել **լրացուցիչ փուլի մրցույթին**: Լրացուցիչ փուլի մրցույթի արդյունքները կհրապարակվեն **ա/թ հուլիսի 30-ին**:

ԵՊՀ ընդունված դիմորդները սեպտեմբերի 1-ին համապատասխան ֆակուլտետի դեկանատ պետք է ներկայացնեն պահանջվող փաստաթղթերի բնօրինակները: